Ք Ա Ղ Վ Ա Ծ Ք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ

«03» ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2012 Թ. N 249-Ա ՀՐԱՄԱՆԻՑ

ԿՈՏԱՅՔ ՆՈՏԱՐԱԿԱՆ ՏԱՐԱԾՔԻ ՆՈՏԱՐ ՆՈՒՆԵ ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹ ՀԱՐՈՒՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նոտարիատի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասով, 25-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով և հիմք ընդունելով Կոտայք նոտարական տարածքի նոտար Նունե Մանուչարյանի կողմից 01.09.2011-01.09.2012 թթ. ժամանակահատվածն ընդգրկող նոտարական գործողությունների օրինականության ստուգման արդյունքներով Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության աշխատակազմի օրինականության վերահսկողության տեսչության կողմից ներկայացված տեղեկանքը, ինչպես նաև աշխատակազմի օրինականության վերահսկողության տեսչության պետ Ն. Փանոսյանի զեկուցագիրը.

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ Ե Մ՝

Կոտայք նոտարական տարածքի նոտար Նունե Մանուչարյանի նկատմամբ հարուցել կարգապահական վարույթ:

Հ. ԹՈՎՄԱՍՅԱՆ